# ԵՐԱՆԻ ԱՆՈՐ...

Երանի անոր՝ որ խորն իր սրտին
Ունի ակնաղբիւրն իր երջանկութեան,
Անոր վիշտերը ի սպառ կ'անհետին
Նոյնիսկ հասնի երբ կեանքի հուսկ կայանն:

Երանի անոր՝ որ գիտէ սիրել
Արի, անարի մարդերը բոլոր,
Իրերն ալ անշունչ՝ սիրով բորբ ու խոր,
Սրտերը սիրով իրար կամարել:

Երանի անոր որ գիտէ զոհել,
Տալ լաւագոյնը իր ունեցածին,
Մանաւանդ անոր՝ որ գիտէ զոհուիլ,
Ըլլալ երկնքի սուրբ քաղաքացին:

Երանի անոր՝ որ ունի իտէալ,
Ու այդ իտէալի ճամբուն վրայ դերբուկ
Գիտէ թաղել մանր սէրերն անշշուկ,
Ու բնաւ անոնց վրայ չափսոսալ:

Երանի անոր որ գիտէ նայիլ
Մահուան աչքերուն՝ խրոխտ, աներեր,
Որուն նայուածքին կու գայ միշտ փայլիլ
Յաւիտենութեան փառքը անստուեր:

Գ. ՃԱՐՏԱՐ

digitised by A.R.A.R.@